ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2023թ. հունիսի 2

N 149-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի N 64-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՏԱՐՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՊԼԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով.

Ո ր ո շ ու մ ե մ՝

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի հուլիսի 2-ի N 64-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի տարհանված բնակչության կենսապահովման գործընթացի նախապատրաստման պլան»-ում (այսուհետ՝ Պլան) արտակարգ իրավիճակներում մշտական գործող մարզային հանձնաժողովին վերապահված բոլոր գործառույթներն իրականացվում են «Օպերատիվ աշխատանքային խումբ (շտաբ) ստեղծելու, դրա աշխատակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2010 թվականի օգոստոսի 17-ի N 651-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ վարչապետի 2019թ. հուլիսի 16-ի N 934-Ա որոշմամբ սահմանված կարգով ստեղծվող աշխատանքային ենթախմբի կողմից:

2. Ամբողջ Պլանում «ՀՀ արտակարգ իրավիճակների հանրապետական հանձնաժողով» բառերը և դրա հոլովաձևերը փոխարինել համապատասխանաբար «Օպերատիվ

3. Ամբողջ Պլանում «ՓԾ ՃԿԿ» հապավումները փոխարինել «ՓԾ ՃԿԱԿ» հապավումներով:

4. Ամբողջ Պլանում «արտակարգ իրավիճակների նախարարության» բառերը, դրա հոլովաձևերը և «ԱԻՆ» հապավումը փոխարինել համապատասխանաբար «ներքին գործերի նախարարության» բառերով, դրա հոլովաձևերով և «ՆԳՆ» հապավումով:

5. Ամբողջ Պլանում «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն» բառերը և դրա հոլովաձևերը փոխարինել համապատասխանաբար «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանություն» բառերով և դրա հոլովաձևերով:

6. Պլանի I գլխի 3-րդ բաժնի 3-րդ կետի ը՝ ենթակետում «ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչությունը» բառերը փոխարինել «ՀՀ ՆԳՆ ոստիկանության տարածքային ստորաբաժանումները» բառերով:

7. Պլանի II գլխի 5-րդ բաժնի 7-րդ կետում «համայնքը» և «համայնքները» բառերը փոխարինել համապատասխանաբար «բնակավայրը» և «բնակավայրերը» բառերով:

8. Պլանի II գլխի 5-րդ բաժնի 9-րդ կետում «2824» թիվը փոխարինել «3352» թվով:

9. Պլանի II գլխի 5-րդ բաժնի 12-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«12) Տարհանումն իրականացվում է հետևյալ երթուղիներով.

ա) Նոր Ամանոս բնակավայրից ենթակա է տարհանման ամբողջ բնակչությունը՝ 832 մարդ, բնակչությունը տարհանվում է Աշտարակ համայնքի Արուճ բնակավայր, որի բնակչության թիվը կազմում է 1253 մարդ, Նոր Ամանոս-Արուճ երթուղով,

բ) Արագածոտն բնակավայրից ենթակա է տարհանման ամբողջ բնակչությունը՝ 1081 մարդ, բնակչությունը տարհանվում է Աշտարակ համայնքի Կոշ բնակավայր, որի բնակչության թիվը կազմում է 2300 մարդ, Արագածոտն-Կոշ երթուղով,

գ) Նոր Եդեսիա բնակավայրից ենթակա է տարհանման ամբողջ բնակչությունը՝ 1439 մարդ, բնակչությունը տարհանվում է Աշտարակ համայնքի ՈՒջան բնակավայր, որի բնակչության թիվը կազմում է 2068 մարդ, Նոր Եդեսիա-Արագածոտն-ՈՒջան երթուղով:»

10. Պլանի II գլխի 5-րդ բաժնի 14-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«14) Վտանգավոր գոտում գտնվող բնակավայրերից բնակչության տարհանումը կազմակերպելու նպատակով այդ բնակավայրերում ստեղծվում են տարհանման հավաքակայաններ:»

11. Պլանի II գլխի 5-րդ բաժնի 17-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Մարզի 19 վտանգավոր ջրամբարների պատվարի փլուզման դեպքում մասնակի ջրաածկման գոտում կհայտնվի 27 բնակավայր՝ մոտ 4854 բնակչությամբ:»

12. Պլանի II գլխի 7-րդ բաժինը շարադրել նոր խմբագրությամբ՝

«**7. Կենսապահովման համակարգի օբյեկտները՝**

1) << Արագածոտնի մարզի տարածքում կենսապահովման օբյեկտներ են հանդիսանում՝

ա. երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտի օբյեկտները,

բ. բոլոր տեսակի էլեկտրակայանները,

գ. էլեկտրահաղորդակցուղիները,

դ. ջրամատակարարման, էլեկտրամատակարարման և գազամատակարարման ցանցերը,

ե. սննդի և դեղագործական կազմակերպությունները, սննդի և դեղորայքի պահեստները և սառնարանները:»

12. Պլանի III գլխի 10-րդ բաժնի 1-ին կետում «ծառայությունների» բառերը փոխարինել «ստորաբաժանումների» բառերով:

13. Պլանի VI գլխի 27-րդ բաժնի 1-ին կետում «137818» թիվը փոխարինել «140009» թվով, «35782» թիվը փոխարինել «35716» թվով, «102036» թիվը փոխարինել «104293» թվով:

14. Պլանի VI գլխի 28-րդ բաժնի աղյուսակը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 1-ի:

15. Պլանի VI գլուխը լրացնել նոր 31-րդ բաժնով՝ համաձայն հավելված 2-ի:

16. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալին:

17. Սույն որոշումը հայտարարել ըստ առնչության:

18. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 6/2/2023 10:15:42 GMT+4

Հավելված N 1
<< Արագածոտնի մարզպետի
2023թ-ի հունիսի 2 N ///-Ն որոշման

28բաժին՝ <<Արտակարգ իրավիճակների առաջացման (առաջացման սպառնալիքի) և ռազմական դրության դեպքում Արագածոտնի մարզի բնակչության տարհանման հաշվարկ>>

Հ/Հ	Անվանումը	Տարհանման ենթակա բնակչություն (մարդ)
1	2	3
1՝ Քիմիական վտանգավոր օբյեկտների վթարների դեպքում		
1	«Նաիրի Լենդ» ՍՊԸ, Արագածոտնի մարզ, գ.Աղձք	45 աշխատակից
2	«Աշտարակի պտուղ բանջարեղեն գրասենյակ» ՓԲԸ, Արագածոտնի մարզ, գ.Կարբի	12 աշխատակից
3	«Թամար Ֆրուտ»ՓԲԸ, Արագածոտնի մարզ, գ.Կարբի	25 աշխատակից 43 բնակիչ
Ընդամենը քիմիական վտանգավոր օբյեկտների վթարների դեպքում		125 մարդ
2՝ Հիդրոտեխնիկական կառույցների վթարի դեպքում		
1	Միրաք	7
2	Ապարան	612
3	Կայք	40
4	Վարդենիս	61
5	Գեղարոտ	59
6	Վ.Սասնաշեն	39
7	Ն.Սասնաշեն	257
8	Հացաշեն	19
9	Կաքավաձոր	254
10	Ագարակավան	419
11	Արուճ	125
12	Շամիրամ	129
13	Մաստարա	399

14	Կաթնաղբյուր	
15	Դավթաշեն	564
16	Աշնակ	65
17	ք.Թալին	408
18	Վ.Բազմաբերդ	349
19	Ն.Բազմաբերդ	96
20	Կարմրաշեն	323
21	Իրինդ	74
22	Արագածոտն	93
23	Շղարշիկ	108
24	Եղնիկ	51
25	Ծաղկաշեն	29
26	Շենավան	98
27	Քուչակ	85
Ընդամենը հիդրոտեխնիկական կառույցների վթարի դեպքում		97
		4854
3. Ճառագայթային վտանգավոր օբյեկտ՝ ՀԱԷԿ-ի ընդհանուր վթարի դեպքում		
1	Արագածոտն	1081
2	Նոր Ամանոս	832
3	Նոր Եդեսիա	1439
Ընդամենը ճառագայթային վտանգավոր օբյեկտ՝ ՀԱԷԿ-ի ընդհանուր վթարի դեպքում		3352
4. Ուժեղ երկրաշարժի դեպքում		
Ընդամենը՝ ՀՀ Արագածոտնի մարզ 15 բնակավայրերում ուժեղ երկրաշարժի դեպքում		3256 մարդ, որից զոհեր 1870 մարդ, տուժածներ՝ 1386 մարդ, այդ թվում՝ ծանր վիրավորներ՝ 698 մարդ, միջին ծանրության վիրավորներ՝ 374 մարդ և թեթև վիրավորներ՝ 313 մարդ
5. Սելավների առաջացման դեպքում (ըստ՝ Հայաստանի Հանրապետության տարհանված բնակչության կենսաապահովման գործընթացի նախապատրաստման հանրապետական պլանի)		
Ընդամենը՝ Արագածոտնի մարզում սելավների առաջացման դեպքում		1105
6. Ռազմական դրության ժամանակ		
1	Նոր Արթիկ	318
2	Արագածավան	4009
3	Արտենի	2306
4	Գետափ	104
5	Թլիկ	66
6	Կանչ	53

7	Սորիկ	88
8	Հակո	76
Ընդամենը՝ ռազմական դրության ժամանակ		7020

ՀՀ Արագածոտնի մարզպետի
աշխատակազմի գլխավոր քարտուղար

Восстановимая подпись

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN HRACHYA 2014650144

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2023թ-ի հունիսի 2 N 149-Ա որոշման

31բաժին՝ <<Կենսապահովման համակարգի օբյեկտների ցանկը և նրանց հնարավորությունները>>

Հ/Հ	Օբյեկտի անվանումը	Հնարավորությունը
1	«ԳՆԹՈՒՆԻՔ» ՍՊԸ հացի արտադրություն	1000-1500 կգ/օր
2	«Կարեն Հովհաննիսյան» ԱՁ հացի արտադրություն	300-400 կգ/օր
3	«Գոռ Հունանյան» ԱՁ հացի արտադրություն	300-400 կգ/օր
4	«Ժորա Մելիքյան» ԱՁ հացի արտադրություն	300-400 կգ/օր
5	«Արմեն Բունիաթյան» ԱՁ հացի արտադրություն	300-400 կգ/օր
6	«Թամարա-Ֆրութ» ՓԲԸ պահածոների արտադրություն	1500 կգ/օր
7	«Նաիրի Լենդ» ՍՊԸ կաթնամթերքի արտադրություն	2000 կգ./օր

ՀՀ Արագածոտնի մարզպետի
աշխատակազմի գլխավոր քարտուղար

Восстановимая подпись

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN HRACHYA 2014650144

Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ